600.0399.25.10.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2019 թվականի №399Ա
ք. Երևան

«ԱՆԻ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի №375Ա ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի №160Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՋՐԱԶՈՐ» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻՑ ԱՌԱՔՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԴԻՄԱՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՎԵԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2009 թվականի հուլիսի 15-ի №375Ա որոշմամբ «Անի» բաց բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրաձոր համայնքի վարչական տարածքում՝ Ախուրյան գետի աջ ափին գտնվող ոռոգման ջրատարի վրա կառուցված «Ջրաձոր» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0322 լիցենզիան (այսուհետ՝ №0322 լիցենզիա),
2) Ընկերությունը 2017 թվականի մայիսի 3-ի №05.025 գրությամբ հայտնել է, որ ձեռք է բերել Կայանը սնուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքում գտնվող Ջրաձոր և Ամասիա ջրանցքները, դրանց օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ բոլոր հիդրոտեխնիկական կառուցվածքները՝ սկզբնամասից մինչև ջրառը՝ 5.47 կմ ընդհանուր երկարությամբ: Արդյունքում, ըստ Ընկերության, Կայանը կարող է դասվել բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայանների շարքին, ինչից ելնելով էլ վերջինս խնդրել է համապատասխան փոփոխություններ կատարել №0322 լիցենզիայի պայմաններում: Դիմումին կից Ընկերությունը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի №372Ա որոշման պատճենը, որով

Ընկերությանն է օտարվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքում գտնվող 1882 մ² մակերեսով Ջրաձորի ջրանցքը և դրանց օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.1968 հա մակերեսով հողամասը, 5342 մ² մակերեսով Ամասիայի ջրանցքը և դրանց օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 1.38 հա մակերեսով հողամասը, 7060 մ² թունելը, ինչպես նաև ջրանցքներն սպասարկող կառուցվածքները՝ համաձայն նույն որոշման №1 հավելվածի, ջրօգտագործման թույլտվությունը, որտեղ որպես ջրառ նշված է Ախուրյան գետը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականների պատճենները: Միաժամանակ, Ընկերությունը 2017 թվականի մայիսի 3-ին ներկայացրել է սակագնի սահմանման (վերանայման) հայտ,

3) Հանձնաժողովը 2017 թվականի մայիսի 17-ի №167Ա որոշմամբ համապատասխան փոփոխություններ է կատարել Հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 15-ի №375Ա որոշման մեջ և դրանով հաստատված №0322 լիցենզիայի պայմաններում՝ Կայանը դասելով բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայանների շարքին, և նույն օրվա №168Ա որոշմամբ Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը վերանայվել է՝ 15,832 դրամ/կՎտժ (առանց ավելացված արժեքի հարկի) մեծության փոխարեն սահմանվելով 23,753 դրամ/կՎտժ (առանց ավելացված արժեքի հարկի), որը հետագայում վերանայվել է Հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 31-ի «Անի» բաց բաժնետիրական ընկերության «Ջրաձոր» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանելու մասին» №211Ա, 2018 թվականի մայիսի 30-ի «Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները սահմանելու մասին» №181Ա, 2019 թվականի մայիսի 29-ի «Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները սահմանելու մասին» №160Ա որոշումներով,

4) «ՖԵՆՀԱԼ», «ԷՐՍՏԵԴ» և «ԼԱՅԹԷԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (այսուհետ՝ դիմողներ) 2019 թվականի հունիսի 19-ին դիմել են Հանձնաժողով՝ Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի բարձրացմանը միտված՝ Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերում (առերևույթ) անճշտությունների, ենթադրյալ խեղաթյուրված տեղեկությունների մասով վարչական վարույթ հարուցելու վերաբերյալ դիմումով, որով դիմողները, ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ, նշել են, որ Ընկերության կողմից Ախուրյանի Աջափնյա ջրանցքի առանձին հիդրոհանգույցների օտարման ճանապարհով սեփականաշնորհումից հետո Հայաստանի Հանրապետության բնապահպանության

նախարարության կողմից Կայանի ջրօգտագործման թույլտվության մեջ, ի տարբերություն նախորդ թույլտվությունների, որպես ջրառի կետ նշվել է Ախուրյան գետը: Նշված գրառումը, ըստ դիմողների, վստահաբար չի համապատասխանում իրականությանը, քանի որ Կայանը ջրառն իրականացնում է Աջափնյա ջրանցքի գլխամասից՝ պատվարից, որը եղել և մնում է պետական սեփականություն: Վերոնշյալ անճշտությունները և ապատեղեկատվությունը ներկայացվել են Հանձնաժողովին, որպեսզի Ընկերությունը համարվի բոլոր հիդրոկառույցների լիիրավ սեփականատերը, և Կայանից առաքված էլեկտրական էներգիայի համար վճարվի առավելագույն սակագնով,

5) դիմողների 2019 թվականի հունիսի 19-ի գրության հիման վրա, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, հարուցվել է վարչական վարույթ, որի վերաբերյալ դիմողները և Ընկերությունը ծանուցվել են Հանձնաժողովի 2019 թվականի հունիսի 20-ի №ՍԾ/2.3-63/1223-19 գրությամբ,

6) դիմողները վարչական վարույթի շրջանակում Հանձնաժողով ներկայացված 2019 թվականի հունիսի 20-ի, հուլիսի 23-ի, օգոստոսի 8-ի, օգոստոսի 14-ի, օգոստոսի 23-ի, սեպտեմբերի 2-ի և 6-ի գրություններով, ըստ էության, կրկնել են իրենց նախորդ գրությամբ հայտնած փաստարկները՝ ներկայացնելով լրացուցիչ հիմնավորումներ,

7) վարույթի շրջանակում ստեղծված աշխատանքային խմբի կողմից, որում ներգրավվել է նաև Հայաստանի Հանրապետության ջրային կոմիտեի ներկայացուցիչը, 2019 թվականի հունիսի 25-ին Շիրակի մարզի Ամասիա համայնքում՝ Կայանում, իրականացվել է մոնիթորինգ: Արդյունքում փաստվել է, որ Ախուրյանի Աջափնյա ջրանցքի ջրառի հատվածում՝ թունելից առաջ առկա է այն սնուցող «Գ»-աձև բաց ջրանցք՝ ջրաչափական դիտակետով, և պատվար,

8) Ընկերությունը 2019 թվականի հունիսի 28-ի №06.043 գրությամբ հայտնել է, որ իր ներկայացրած բոլոր տեղեկությունները ճիշտ են և համապատասխանում են իրականությանը, 2017 թվականին տեղի է ունեցել ջրառի կետի փոփոխություն՝ պայմանավորված ջրանցքի և կից հիդրոտեխնիկական կառույցների և սարքավորումների ձեռքբերմամբ: Միաժամանակ, Ընկերությունը տեղեկացրել է, որ Կայանը ջրառն իրականացնում է Ախուրյանի Աջափնյա ջրանցքի գլխամասի հատվածից «Գ»-աձև ջրանքի միջոցով և Ընկերությունը հանդիսանում է Կայանը սնուցող բոլոր հիդրոտեխնիկական ենթակառուցվածքների լիիրավ սեփականատերը: Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի

13-ի N372Ա որոշման՝ նույն թվականի ապրիլի 25-ին կնքվել է պետական գույքի օտարման և գրավի պայմանագիր: Այդ պայմանագրի շրջանակում կողմերի միջև կազմվել է նաև հանձնման-ընդունման ակտ, որտեղ հստակ արտացոլված է Ընկերությանն ամբողջությամբ հանձնված գույքացանկը: Նշված պայմանագրով փոխանցված գույքի բնութագիրը և նկարագրությունը սահմանված է վերոնշյալ պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող հանձնման-ընդունման ակտով, որը պետք է Հանձնաժողովի կողմից ելակետային համարվեր, և հանձնման-ընդունման ակտում նշված գույքը փաստացի առկա է,

9) Հանձնաժողովը 2019 թվականի հուլիսի 1-ի №ԳԲ/2.2-21/1373-19 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության ջրային կոմիտե՝ խնդրելով հայտնել, թե Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի №372Ա որոշմամբ ընկերությանը հանձնված գույքն արդյոք ներառում է Ախուրյանի Աջափնյա ջրանցքի՝ ոռոգման և Կայանի շահագործման նպատակով ջուրն ընդունելու (տեղափոխելու) համար անհրաժեշտ բոլոր հիդրոկառույցները (այդ թվում՝ «Գ»-աձև բաց ջրանցքը՝ ջրաչափական դիտակետով և պատվարը), թե որևէ հիդրոկառույց կամ դրա մաս գտնվում է կոմիտեի կամ «Շիրակ» ջրօգտագործողների ընկերության հաշվեկշռում,

10) Հայաստանի Հանրապետության ջրային կոմիտեն 2019 թվականի հուլիսի 10-ի №01/05/3077-19 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի №1913Ա որոշմամբ Ախուրյանի Աջափնյա ջրանցքը առանց գլխամասային կառույցի առանձնացվել է «Ոռոգում-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության գույքի կազմից և, ամրացվելով ջրային կոմիտեին, անհատույց օգտագործման իրավունքով հանձնվել «Աջափնյակոռոգում» ջրօգտագործողների ընկերությանը (վերակազմակերպման արդյունքներով ներկայիս «Շիրակ» ջրօգտագործողների ընկերություն): Իսկ ջրանցքի գլխամասային կառույցը Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 9-ի №164Ն որոշմամբ փոխանցվել է «Ոռոգում-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման արդյունքում առանձնացման ձևով ստեղծված «Ախուրյան-Արաքս-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությանը և, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 19-ի №906Ա որոշմամբ նրա կազմից առանձնացվելով ամրացվել է ջրային կոմիտեին և նույնպես փոխանցվել «Շիրակ» ջրօգտագործողների ընկերությանը՝ անհատույց օգտագործման իրավունքով: Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի №372Ա որոշման 1-ին կետով Հայաստանի Հանրապետության էներգետիկ

ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի հաշվեկշռում հաշվառված և անհատույց օգտագործման իրավունքով «Շիրակ» ջրօգտագործողների ընկերությանը հանձնված Ախուրյանի Աջափնյա ջրանցքի գլխամասից հետո որոշակի հատված ուղղակի վաճառքի ձևով օտարվել է Ընկերությանը: Ինչ վերաբերում է ջրանցքի ջրառի հատվածում՝ թունելից առաջ առկա ջրաչափական դիտակետով և պատվարով «Գ»-աձև բաց ջրանցքի պատկանելիությանը, ապա Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի №372Ա որոշման համաձայն՝ 2017 թվականի մայիսի 24-ին կազմված հանձնման-ընդունման ակտով Ընկերությանն է փոխանցվել «Գ»-աձև ջրանցք ջրաչափական դիտակետով», իսկ պատվարը, ինչպես նաև ջրանցքի գլխամասային հիմնական կառուցվածքները չեն փոխանցվել Ընկերությանը և հանդիսանում են պետական սեփականություն,

11) Ընկերությունը 2019 թվականի հուլիսի 15-ի №07.049 գրությամբ հայտնել է, որ ջրընդունիչից մինչև Կայանը՝ Կայանի անկախ շահագործման համար անհրաժեշտ բոլոր հիդրոտեխնիկական կառույցները և փականները հանդիսանում են իր սեփականությունը: Որպես նշված հիմնավորում՝ Ընկերությունը ներկայացրել է «ԳԻԴԷՊԻՆՎԵՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «ՀԱՅՀԻԴՐՈԷՆԵՐԳԱՆԱԽԱԳԻԾ» փակ բաժնետիրական ընկերության համապատասխանաբար 2019 թվականի հունիսի 27-ի №24/19 և հունիսի 28-ի №Ա-53 գրությունները: Հաշվի առնելով նշված գրությամբ ներկայացված հիմնավորումների ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 2-րդ մասը, վարչական վարույթի ժամկետը երկարաձգել է 10 օրով,

12) 2019 թվականի հուլիսի 17-ին Հանձնաժողովում տեղի են ունեցել քննարկումներ Ընկերության, «ԳԻԴԷՊԻՆՎԵՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «ՀԱՅՀԻԴՐՈԷՆԵՐԳԱՆԱԽԱԳԻԾ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչների մասնակցությամբ, որոնց ընթացքում ընկերությունների ներկայացուցիչները պնդել են, որ չնայած այն հանգամանքին, որ ջրթափային պատվարը ի սկզբանե ծառայել է ընդունվող ջրի մակարդակը բարձրացնելուն, դեպի թունել ջրի հոսքը սահուն իրականացնելուն, այդուհանդերձ, տարիների ընթացքում գետով եկած տիղմը, ավազախառն հողն ամբողջությամբ լցվել են պատվարի առջևի տարածքը, և քանի որ ջրանցքի հունի մակարդակը ավելի ցածր է, քան ջրընդունիչի

սկզբնամասն է, գետով եկած ջուրը սահուն, առանց խոչընդոտների գնում է դեպի ջրանցք, և ներկայումս նշված պատվարը ջրառի համար որևէ դերակատարում չունի: Միաժամանակ, քննարկման ընթացքում մասնագիտացված կազմակերպության ներկայացուցիչը փաստել է նաև, որ պատվարի չլինելու դեպքում գարնանը հեղեղումների ընթացքում ստեղծված հողային շերտը չի կարող դիմակայել ջրի հոսքին և անհրաժեշտ կլինի տալ այլ լուծում,

13) Ընկերությունը 2019 թվականի հուլիսի 25-ի №07/055 գրությամբ պնդել է, որ Կայանի շահագործման ընթացքում օգտագործվող ջրանցքի գլխամասային բոլոր հիդրոկառույցները՝ այդ թվում պատվարը, համաձայն իր կողմից ներկայացված սեփականության իրավունքի գրանցման վկայականում առկա անշարժ գույքի կոորդինատային տվյալների՝ ամբողջությամբ պատկանում են Ընկերությանը: Վերջինս միաժամանակ հայտնել է, որ դիմել է համապատասխան մասնագիտացված կազմակերպության՝ հիշյալ հիդրոկառույցների չափագրման կատարման և կոորդինատային տվյալների հստակեցման համար: Իսկ 2019 թվականի օգոստոսի 7-ի №08.059 գրությամբ Ընկերությունն առարկություններ է ներկայացրել դիմողների 2019 թվականի հուլիսի 23-ի գրությամբ նշված պնդումների վերաբերյալ,

14) Հանձնաժողովը 2019 թվականի հուլիսի 29-ին սույն վարչական վարույթի շրջանակում հրավիրված նիստի արդյունքում, հաշվի առնելով վարույթի մասնակիցների ներկայացրած բոլոր փաստարկները և ելնելով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության անհրաժեշտությունից, նույն օրվա իր №ԳԲ/2.3-71/1764-19 գրությամբ, փոխօգնության կարգով դիմել է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ խնդրելով հայտնել, թե Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի №372Ա որոշման հիման վրա Ընկերության անվամբ գրանցված գույքն արդյոք ներառում է Ախուրյանի Աջափնյա ջրանցքի գլխամասային հիդրոկառույցները՝ այդ թվում պատվարն ամբողջությամբ, թե՝ ոչ, եթե ոչ, ապա համապատասխան գրանցման առկայության դեպքում տրամադրել այդ գույքի, ինչպես նաև դրանով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ իրավունքների գրանցման վերաբերյալ տեղեկատվություն: Միաժամանակ, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և 2-րդ մասը՝ վարչական վարույթի ժամկետը երկարաձգվել է 30 օրով,

15) Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեն 2019 թվականի օգոստոսի 6-ի №ՍՊ//6154-2019 գրությամբ հայտնել է, որ Ընկերության անվամբ տրված №02052017-08-

0010, №02052017-08-0005 և №02052017-08-0007 վկայականներում առկա չեն մատնանշված գլխամասային հիդրոկառույցներ՝ այդ թվում պատվար, անվանումները: Նշված վկայականներում շինությունների անվանումները գրառված են համաձայն Հայաստանի Հանրապետությունում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեությամբ զբաղվելու որակավորման վկայական ստացած անձի կողմից տրված փաստաթղթերի,

16) Հանձնաժողովը, ելնելով վարչական վարույթի շրջանակում հարցի պարզաբանման կարևորությունից, 2019 թվականի օգոստոսի 8-ի №ԳԲ/2.2-21/1978-19 գրությամբ ևս մեկ անգամ դիմել է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ խնդրելով պարզաբանել, թե արդյոք Ընկերության անվամբ որպես սեփականություն գրանցված և համապատասխան սեփականության իրավունքի գրանցման վկայականներում նշված գույքի կազմում, համաձայն այդ վկայականներին կից կոորդինատական կետերի, Ախուրյանի Աջափնյա ջրանցքի գլխամասային հիդրոկառույցները՝ այդ թվում պատվարը (անկախ վկայականներում դրանց անվանումների նշված չլինելու հանգամանքից), ամբողջությամբ ներառված են, թե՝ ոչ, եթե ոչ, ապա համապատասխան գրանցման առկայության դեպքում տրամադրել այդ գույքի, ինչպես նաև դրանով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ իրավունքների գրանցման վերաբերյալ տեղեկատվություն,

17) Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեն 2019 թվականի օգոստոսի 16-ի №ՍՊ//6357-2019 գրությամբ հայտնել է, որ ըստ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային արխիվի տվյալների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ին №372-Ա որոշման և 2017 թվականի ապրիլի 25-ին վավերացված սեղանամատյան №5126 պետական գույքի օտարման և գրավի պայմանագրի հիման վրա Ընկերության անվամբ գրանցված անշարժ գույքերի անվանումներում առկա չեն «գլխամասային հիդրոկառույցներ»՝ այդ թվում «պատվար» անվանումները: Միաժամանակ, հայտնել է, որ կադաստրային գործում առկա՝ Հայաստանի Հանրապետությունում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեությամբ զբաղվելու որակավորման վկայական ստացած անձի կողմից տրված փաստաթղթերից երևում է, որ պատվարը ամբողջությամբ ներառված չէ Ընկերության անվամբ գրանցված անշարժ գույքերի ցանկի մեջ: Ի լրումն նշվածի՝ կոմիտեն տեղեկացրել է նաև, որ 2019 թվականի օգոստոսի 6-ին կոմիտեի Կենտրոն սպասարկման գրասենյակ է ներկայացվել դիմում՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման №02052017-08-0010 վկայականում

նշված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի վերագրանցման պահանջով: Դիմումին կից ներկայացվել են նաև Հայաստանի Հանրապետությունում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեությամբ զբաղվելու որակավորման վկայական ստացած անձի կողմից տրված փաստաթղթեր, որոնցում առկա են նաև «գլխամասային հանգույց պատվար» և «բաց ջրանցք» շինության անվանումները: Սակայն 2019 թվականի օգոստոսի 7-ի դիմումով ներկայացված պահանջը գրավոր մերժվել է՝ այլ պատճառներից բացի նշելով նաև, որ ներկայացված որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված փաստաթղթերը չեն համապատասխանում վերոնշյալ պայմանագրի №2 կետում նշված շենք, շինություններին, առկա են օրինական դիտարկված պատվար և բաց ջրանցք, որոնց վերաբերյալ չի ներկայացվել համապատասխան փաստաթուղթ (2019 թվականի օգոստոսի 7-ի տրված №Մ-07082019-08-0003 գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին որոշում), իսկ հողամասի հատակագծում փոփոխված են նախկինում իրավունքի պետական գրանցման ներկայացված հողամասի հատակագծում նշված հողամասի շրջադարձային (բեկման կետերի) կոորդինատները: Նշված որոշումը Ընկերության կողմից բողոքարկվել է դատական կարգով,

18) դիմողները 2019 թվականի օգոստոսի 22-ի գրությամբ հայտնել են, որ դիմել են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե և խնդրել երկարաձգել վարչական վարույթի ժամկետը՝ կոմիտեից Ախուրյանի Աջափնյա ջրանցքի՝ Ընկերությանը պատկանելիության վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով, ինչը հաշվի առնելով՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, վարչական վարույթի ժամկետը երկարաձգել է 10 օրով,

19) Ընկերությունը 2019 թվականի օգոստոսի 30-ի գրությամբ հայտնել է, որ 2019 թվականի օգոստոսի 15-ին հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի (երրորդ անձ՝ Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտե)՝ իրավունքի պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու պահանջով: Հայցադիմումը վերաբերում է «Պոլիգոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության որակավորված մասնագետի միջոցով կազմված հատակագծում նշված անշարժ գույքերին, այդ թվում՝ պատվարին. Ընկերության կողմից բոլոր հիդրոկառույցների սեփականատեր լինելու, մասնավորապես՝ ջրանցքի ջրառի հատվածում թունելից առաջ առկա ջրաչափական դիտակետով և պատվարով «Գ»-աձև

բաց ջրանցքի պատկանելիության հարցը հանդիսանում է վարչական դատավարության կարգով քննվող հիշյալ գործի առարկա: Հաշվի առնելով նշվածը՝ Ընկերությունը միջնորդել է կասեցնել վարչական վարույթը՝ մինչև վերը նշված վարչական գործով համապատասխան վճռի կայացումը,

20) Հանձնաժողովը 2019 թվականի սեպտեմբերի 4-ի №ՍՇ/34.1-Մ2-5/2311-19 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ խնդրելով տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 9-ի №164Ն որոշման հիման վրա «Ռոզում-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունից առանձնացման ձևով վերակազմակերպման արդյունքում առաջացած «Ախուրյան-Արաքս-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության բաժանիչ հաշվեկշիռը և փոխանցման ակտը,

21) Հանձնաժողովը 2019 թվականի սեպտեմբերի 4-ի №ԳԲ/34.1-Մ2-5/2315-19 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ խնդրելով հայտնել, արդյոք Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի №372Ա որոշմամբ Ընկերությանը հանձնվել է Կայանում էլեկտրական էներգիայի արտադրության համար անհրաժեշտ ամբողջ գույքը, այդ թվում՝ գլխամասային կառույցը՝ պատվարի հետ միասին, թե ոչ,

22) Հանձնաժողովը 2019 թվականի սեպտեմբերի 6-ի №ԳԲ/34.1-Մ2-6/2413-19 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության ջրային կոմիտե՝ խնդրելով տրամադրել Ախուրյանի Աջափնյա ջրանցքի պատվարի և ջրանցքի գլխամասային հիմնական կառուցվածքների՝ կոմիտեի հաշվեկշռում հաշվառված լինելու վերաբերյալ հիմնավորումներ,

23) հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և 2-րդ մասը՝ վարչական վարույթի ժամկետը երկարաձգվել է 30 օրով,

24) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը 2019 թվականի սեպտեմբերի 10-ի №25.0.1/25.8/20449-2019 գրությամբ Հանձնաժողովին է տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի 2006 թվականի ապրիլի 25-ի №47Ա հրամանը, որի №1 հավելվածի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 9-ի №164Ն որոշման և

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի 2006 թվականի մարտի 7-ի №27Ա հրամանի համաձայն «Ոռոգում-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման կապակցությամբ «Ոռոգում-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշռում 2006 թվականի մարտի 7-ի դրությամբ հաշվառվող գույքից «Ախուրյան-Արաքս-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցման ենթակա հիմնական միջոցների, անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների, նյութերի և փոքրարժեք արագամաշ առարկաների ամփոփ ցանկի» 24-րդ կետում առկա է «Ախուրյանի աջափնյա ջրանցքի գլխամասային կառույց/կառուցվածք» նշումը, գտնվելու վայրն էլ՝ Ամասիա,

25) դիմողների 2019 թվականի սեպտեմբերի 17-ի գրությամբ ներկայացված լիազորագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն լիազորել է Մեսրոպ Գևորգի Մանուկյանին հանդես գալու իր անունից լիազորագրում նշված մարմիններում՝ իրականացնելու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքում գտնվող Ախուրյանի Աջափնյա ջրանցքի գլխամասից հետո ПК5+47 հատվածի պետական գրանցման գործառույթներ,

26) Հայաստանի Հանրապետության ջրային կոմիտեն 2019 թվականի սեպտեմբերի 25-ի №01/06/4295-19 գրությամբ Հանձնաժողովին է տրամադրել կոմիտեի հաշվեկշռում հաշվառված և «Շիրակ» ՋՕԸ-ին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված Ախուրյանի Աջափնյա ջրանցքի գլխամասային կառույցի վերաբերյալ «Քաղվածք»՝ կոմիտեի հաշվապահական հաշվեկշռի հիմնական միջոցների ցանկից, որտեղ առկա են «պատվար» «գլխամասային հանգույց ջրանցք» և «Աջափնյա ջրանցք ՊԿ0+00 ՊԿ 0+60» գրառումները,

27) Հանձնաժողովը 2019 թվականի հոկտեմբերի 2-ի № ԳԲ/34.1-Մ2-6/2736-19 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության ջրային կոմիտե՝ խնդրելով հայտնել, արդյոք «Աջափնյա ջրանցք ՊԿ0+00 ՊԿ 0+60» գույքը հանդիսանում է Ախուրյանի Աջափնյա ջրանցքի գլխամասային հանգույցից հետո մինչև թունել ընկած հատվածը, թե՝ ոչ: Միաժամանակ, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և 2-րդ մասը՝ վարչական վարույթի ժամկետը երկարաձգվել է 30 օրով,

28) Հայաստանի Հանրապետության ջրային կոմիտեն 2019 թվականի հոկտեմբերի 16-ի №01/06/4667-19 գրությամբ հայտնել է, որ «Աջափնյա ջրանցք ՊԿ0+00 ՊԿ 0+60» գույքը հանդիսանում է Ախուրյանի Աջափնյա ջրանցքի գլխամասային կառույցի բաղադրիչ,

29) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի 2019 թվականի հոկտեմբերի 16-ի №02/16.11/46563-2019 գրությամբ, որպես Հայաստանի Հանրապետության կառավարության դիրքորոշում, ներկայացվել է արդարադատության նախարարության դիրքորոշումը, որով վերջինս հայտնել է, որ անհրաժեշտ է հիմք ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի №372Ա որոշման 1-ին կետի դրույթները, համաձայն որոնց՝ Ընկերությանն են հանձնվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքում գտնվող 1882 քառակուսի մետր մակերեսով Ջրաձորի ջրանցքը և դրանց օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.1968 հեկտար մակերեսով հողամասը, 5342 քառակուսի մետր մակերեսով Ամասիայի ջրանցքը և դրանց օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 1.38 հեկտար մակերեսով հողամասը, 7060 քառակուսի մետր թունելը, ինչպես նաև ջրանցքները սպասարկող կառուցվածքները: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ որոշման 1-ին կետով հաստատվող N 1 հավելվածում որպես «ջրանցքները սպասարկող կառուցվածքներ» նշված են՝ դյուկեր՝ երկճյուղ խողովակով՝ 1186 մետր, փական՝ կարգավորիչ 0.4x08՝ 1 հատ, փական՝ կարգավորիչ 1.2x1.5՝ 1 հատ, փական՝ կարգավորիչ 0.8x1.5՝ 1 հատ, մետաղական փական d=200՝ 2 հատ: Միևնույն ժամանակ, բարձրացված հարցի առնչությամբ նախարարությունը նշել է, որ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև հետևյալը.

- Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերը սեփականության իրավունքով պատկանում են պետությանը կամ համայնքին, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը ձեռք է բերում իրեն պատկանող հողամասի վրա կառուցված շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի սեփականության իրավունք: Այստեղից հետևում է, որ պետությունը կամ համայնքը սեփականության իրավունք ձեռք են բերում նաև նշված հողամասերի վրա կառուցված հիդրոկառույցների նկատմամբ: Դրանք սեփականության իրավունքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանել չեն կարող,
- Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ հիշյալ օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա կառուցված շենքերը կամ շինությունները՝ այս դեպքում հիդրոկառույցները, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կարող են տրամադրվել միայն օգտագործման կամ կառուցապատման իրավունքով: Այս

մասին է փաստում նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 209-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթն առ այն, որ արգելվում է օտարել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն շենքերը կամ շինությունները, որոնք գտնվում են այնպիսի հողամասերի վրա, որոնց սեփականության իրավունքով փոխանցումն արգելված է օրենքով: Նման շենքերը կամ շինությունները կարող են տրամադրվել օգտագործման կամ կառուցապատման իրավունքով,

30) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2019 թվականի հոկտեմբերի 21-ի N01/22.3ՏՄ/17223-19 գրությամբ, ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հոկտեմբերի 16-ի №02/16.11/46568-2019 հանձնարարականի, խնդրո առարկա հարցի առնչությամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության ջրային կոմիտեի 2019 թվականի հուլիսի 10-ի №01/05/3077-19 գրությամբ ներկայացված դիրքորոշումը,

31) 2017 թվականի մայիսի 3-ի դրությամբ գործող խմբագրությամբ Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայի (այսուհետ՝ Մեթոդիկա)՝ 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններ են համարվում այն կայանները, որոնք ունեն մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորություն, էլեկտրական էներգիա արտադրելու նպատակով ամբողջությամբ, մասնակիորեն կամ համատեղության կարգով չեն օգտագործում այլ անձանց պատկանող հիդրոկառույցներ և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա են ստացել 2004 թվականի փետրվարի 9-ից հետո,

32) ներկայումս գործող խմբագրությամբ Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայի՝ 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններ են համարվում այն կայանները, որոնք ունեն մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորություն, էլեկտրական էներգիա արտադրելու նպատակով ամբողջությամբ, մասնակիորեն կամ համատեղության կարգով չեն օգտագործում այլ անձանց հիդրոկառույցներ (բացառությամբ Հայաստանի

Հանրապետության հողային օրենսգրքի համաձայն անօտարելի համարվող հողամասերում կառուցված հիդրոկառույցների) և էլեկտրական էներգիայի արտադրության առաջին լիցենզիան ստացել են 2004 թվականի փետրվարի 9-ից հետո,

33) Հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 7-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն որոշման վերաբերյալ» №298 պաշտոնական պարզաբանման համաձայն՝ որպեսզի հիդրոէլեկտրակայանը մեթոդիկայի 1-ին կետի 1-ին ենթակետի իմաստով համարվի բնական ջրահոսքի վրա կառուցված, ի թիվս նույն ենթակետում նշված մյուս պայմանների (ունենա մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորություն, էլեկտրական էներգիայի արտադրության առաջին լիցենզիան ստացած լինի 2004 թվականի փետրվարի 9-ից հետո), անհրաժեշտ է, որ էլեկտրական էներգիա արտադրելու նպատակով կայանի կողմից օգտագործվող բոլոր հիդրոկառույցներն ամբողջությամբ պատկանեն կայանը շահագործող անձին (իրավաբանական կամ ֆիզիկական), իսկ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա կառուցված հիդրոկառույցներ օգտագործելու դեպքում կայանը շահագործող անձը համապատասխան լիցենզիայի գործողության ողջ ընթացքում այդ հիդրոկառույցների նկատմամբ պետք է ունենա օրենսդրությամբ պահանջվող՝ համապատասխան գույքային իրավունք (կառուցապատման կամ օգտագործման),

34) №0322 լիցենզիայի պայմանների՝ 2017 թվականի մայիսի 3-ի դրությամբ գործող խմբագրությամբ 6.15 կետի համաձայն՝ լիցենզավորված անձը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության հաշվետվության և այլ տեղեկատվության հավաստիության համար,

35) «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի՝

- 2-րդ հոդվածի համաձայն՝ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտը ներառում է էներգետիկայի բնագավառը,
- 5-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի համաձայն՝ կարգավորման հիմնական սկզբունք է՝ սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռումը՝ ծառայությունների հիմնավորված սակագների սահմանման միջոցով,
- հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումն իրականացնում է Հանձնաժողովը,

36) «Էներգետիկայի մասին» օրենքի՝

- 4-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն՝ սակագինը էլեկտրական էներգիայի (հզորության) միավորի վաճառքի համար հանձնաժողովի կողմից նույն օրենքին համապատասխան սահմանված առավելագույն գինը կամ վճարն է,
- 42-րդ հոդվածի համաձայն՝ գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից նույն օրենքի դրույթները, հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, գործունեության լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կիրառելու նշված հոդվածով նախատեսված տուժանքներ,

37) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը,

38) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ՝

- Մեթոդիկայի իմաստով Կայանը չի հանդիսանում և չի հանդիսացել բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայան, քանի որ՝
  - կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար առկա են այն սնուցող ջրանցքի գլխամասային հիդրոկառույցներ, որոնք հանձնված չեն Ընկերությանը, հանդիսանում են պետական սեփականություն, և Ընկերությունը չունի այդ հիդրոկառույցների շահագործման համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով պահանջվող համապատասխան իրավունքներ (ինչը հավաստվել է Հայաստանի Հանրապետության կառավարության, կադաստրի կոմիտեի, ջրային կոմիտեի և արդարադատության նախարարության իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի համապատասխան դիրքորոշումներով և ներկայացված տեղեկատվությամբ),
  - հանրահայտ է, որ ինչպես ցանկացած այլ, այնպես էլ տվյալ դեպքում գլխամասային հիդրոկառույցներն անհրաժեշտ են համապատասխան ջրանցքի և ջրընդունիչի բնականոն շահագործումն ապահովելու, այն է՝ ջրանցքով ոռոգման և Կայանի շահագործման նպատակով անհրաժեշտ քանակի ջուրն ընդունելու (տեղափոխելու) համար: Ինչ վերաբերում է Ընկերության պնդմանն

առ այն, որ հիշյալ հիդրոկառույցներն անհրաժեշտ չեն Կայանի շահագործման համար, ապա այն անհիմն է, ինչն ըստ էության փաստվել է նաև սույն վարչական վարույթի ընթացքում համապատասխան նախագծային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ տեղի ունեցած քննարկման ընթացքում: Ավելին, վերջիններիս կողմից հավաստվել է նաև, որ խնդրո առարկա գլխամասային կառույցի բացակայության դեպքում անհրաժեշտ կլիներ ապահովել այլ նախագծային լուծումներ: Ընկերությունը, ինչպես 2017 թվականի մայիս ամսին (Կայանը բնական ջրահոսքի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայանների շարքին դասելու համար համապատասխան փոփոխություններ կատարելու համար Հանձնաժողով դիմելիս), այնպես էլ սույն վարչական վարույթի ընթացքում Հանձնաժողով չի ներկայացրել խնդրո առարկա հիդրոկառույցները Կայանի և ջրանցքի շահագործման համար անհրաժեշտ չլինելու վերաբերյալ նախագծային հիմնավորումներ՝ համապատասխան փորձաքննություններով,

- Ընկերությունը խախտել է №0322 լիցենզիայի՝ 2017 թվականի մայիսի 3-ի դրությամբ գործող խմբագրությամբ պայմանների 6.15 կետի պահանջը, այն է՝ Հանձնաժողով է ներկայացրել ոչ հավաստի տեղեկատվություն՝ Կայանը սնուցող կառույցների՝ Ընկերությանը պատկանելության և արդյունքում Կայանի՝ բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայանների շարքին դասվելու վերաբերյալ, ինչը հանգեցրել է էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության, արդյունքում նաև՝ սպառողների օրինական շահերի խախտման,
- №0322 լիցենզիայի՝ 2017 թվականի մայիսի 3-ի դրությամբ գործող խմբագրությամբ պայմանների 6.15 կետի պահանջի խախտման հետևանքով Ընկերությունը 2017 թվականի հունիսի 17-ից մինչև սույն որոշման ընդունման օրն ընկած ժամանակահատվածում Կայանից առաքված էլեկտրական էներգիայի դիմաց վճարվել է ավելի բարձր սակագնով: Մասնավորապես՝ նշված ժամանակահատվածում Ընկերությանը Կայանից առաքված էլեկտրական էներգիայի դիմաց վճարվել է շուրջ 480 միլիոն դրամ ավելի գումար (առանց ավելացված արժեքի հարկի), որը, համաձայն գործող կարգավորումների, ներառվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագնում,

- սույն վարչական վարույթը ենթակա չէ կասեցման. մասնավորապես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի հիմքով վարչական վարույթի կասեցման պատճառ կարող է լինել միայն այն դատական գործի առկայությունը, որի արդյունքում ընդունվող դատական ակտով հաստատվող հանգամանքներն ունեն այնպիսի առանցքային նշանակություն տվյալ վարչական վարույթի համար, որ առանց այդ հանգամանքների անվիճելիության անհնար է ընդունել վարչական ակտ: Վերոնշյալ վերլուծության տեսանկյունից ուսումնասիրելով կասեցման միջնորդությանը կից ներկայացված հայցադիմումի պատճենը՝ պարզ է դառնում, որ տվյալ դեպքում Ընկերության կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ներկայացվել է Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով նախատեսված հայցատեսակը՝ պարտավորեցման հայց, որի առարկան, համաձայն նշված հոդվածի 2-րդ մասի, ներառում է նաև կադաստրի կոմիտեի 2019 թվականի օգոստոսի 7-ի «Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին» որոշման վիճարկման պահանջը:

Հանձնաժողովը նախնառաջ հարկ է համարում նշել, որ միջնորդության քննարկման տեսանկյունից անհրաժեշտ է դիտարկել վերոնշյալ գործով հայցի բավարարման հնարավոր ազդեցությունը Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթի վրա, քանի որ հայցի մերժման դեպքում նյութական իրավահարաբերություններում որևէ փոփոխություն տեղի չի ունենա:

Ըստ այդմ, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ, 124-րդ հոդվածների և 125-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համադրված վերլուծության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ անգամ հայցվորի համար գործի դրական ելքի՝ հայցի բավարարման դեպքում պետք է ընդունվի հայցվորի պահանջը բավարարող բարենպաստ վարչական ակտ՝ պարտավորեցնելով կադաստրի պետական կոմիտեին կատարելու «Պոլիգոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության որակավորված մասնագետի միջոցով կազմված հատակագծում նշված անշարժ գույքերի, այդ թվում՝ պատվարի վերաբերյալ Ընկերության իրավունքների պետական գրանցում: Ընդ որում, նշված բարենպաստ վարչական ակտը պետք է ուղղված լինի «Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին» որոշման հետևանքների վերացմանը, իսկ մինչև նշված որոշման ընդունումը եղած հարաբերությունները (այդ թվում՝ հայցվորի իրավունքի ենթադրյալ խախտումները) դուրս են նշված վարչական ակտի առարկայից:

Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթի առարկան 2017 թվականի մայիսի 17-ի №167Ա որոշման ընդունման պահի դրությամբ Կայանի շահագործման համար անհրաժեշտ բոլոր հիդրոկառույցների (այդ թվում՝ պատվարի) նկատմամբ Ընկերության համապատասխան գրանցված իրավունքների առկայության պարզումն է:

Հետևաբար, վերը նշվածի համատեքստում Հանձնաժողովը եզրահանգում է, որ վերոնշյալ դատական գործով հայցվորի պահանջի բավարարման դեպքում անգամ չեն կարող հաստատվել այնպիսի հանգամանքներ, որոնք ունեն սույն վարչական վարույթի համար որևէ էական նշանակություն՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի իմաստով: Ուստի տվյալ դեպքում առկա չէ վարչական վարույթը կասեցնելու՝ վերը նշված իրավանորմով նախատեսված հիմքը,

- «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածից ուղղակիորեն բխում է, որ լիցենզավորված անձի թույլ տված խախտման դեպքում կիրառվող պատասխանատվության տարր է նաև Հանձնաժողովի կողմից տվյալ խախտումը վերացնելուն ուղղված գործողություններ ձեռնարկելը, այսինքն՝ պատասխանատվության կիրառումն ունի նաև մինչև թույլ տրված խախտումն առկա վիճակի վերականգնման նպատակ՝ հաշվի առնելով այլ կարգավորվող սուբյեկտների և սպառողների խախտված իրավունքների վերականգնման օրինաչափ շահը, ինչն անմիջականորեն բխում է նշված սուբյեկտների շահերի հավասարակշռումն ապահովելու սկզբունքի բովանդակությունից:

Տվյալ դեպքում Ընկերության կողմից №0322 լիցենզիայի՝ 2017 թվականի մայիսի 3-ի դրությամբ գործող խմբագրությամբ պայմանների 6.15 կետի պահանջի խախտման հետևանքով խախտվել են սպառողների օրինական շահերը՝ վերջիններիս զրկելով հիմնավորված սակագներով ծառայություններ ստանալու՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով ամրագրված սկզբունքով երաշխավորված իրավունքից: Այս պարագայում, մատուցված ծառայությունների դիմաց հիմնավորված սակագին վճարելու սպառողների իրավունքի իրացման երաշխավորման նպատակով, հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասը, անհրաժեշտ է վերացնել վերոնշյալ խախտումը՝ ապահովելով նշված գումարի վերադարձը սպառողներին՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից վերջիններիս մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագներում այն հաշվի

առնելու միջոցով, ընդ որում, ելնելով նշված խախտման՝ հանրության (շուրջ մեկ միլիոն սպառողներ) շահերին ուղղակի առնչությունից, այդ թվում՝ վերջիններիս կողմից ավելի վճարված գումարի՝ հնարավորինս սեղմ ժամկետում վերադարձի ապահովման անհրաժեշտությունից, սույն որոշման համապատասխան կետերի կատարումը անհրաժեշտ է համարել անհապաղ կատարման ենթակա, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 28-րդ, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն որոշումը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. №0322 լիցենզիայի պայմանների՝ 2017 թվականի մայիսի 3-ի դրությամբ գործող խմբագրությամբ 6.15 կետի խախտման համար Ընկերությանը տուգանել 1.000.000 (մեկ միլիոն) դրամ գումարի չափով:

2. Հանձնաժողովի՝

1) 2009 թվականի հուլիսի 15-ի «Անի» բաց բաժնետիրական ընկերությանը «Ջրաձոր» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №375Ա որոշման 1-ին կետում «Ախուրյան գետի վրա կառուցված «Ջրաձոր» փոքր հիդրոէլեկտրակայանում (բնական ջրահոսք)» բառերը փոխարինել «Ախուրյան գետի աջ ափին գտնվող ոռոգման ջրանցքի վրա կառուցված «Ջրաձոր» փոքր հիդրոէլեկտրակայանում (ոռոգման համակարգ)» բառերով, իսկ որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 5-րդ կետում «Ախուրյանի գետի վրա (բնական ջրահոսք)» բառերը՝ «Ախուրյան գետի աջ ափին գտնվող ոռոգման ջրանցքի վրա (ոռոգման համակարգ)» բառերով.

2) 2019 թվականի մայիսի 29-ի «Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները սահմանելու մասին» №160Ա որոշման 1-ին կետի 133-րդ ենթակետում «24.276» թիվը փոխարինել «16.181» թվով, իսկ «29.131» թիվը՝ «19.417» թվով:

3. «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10 օրվա ընթացքում կատարել Կայանից 2017 թվականի հունիսի 17-ից մինչև 2019 թվականի նոյեմբերի 1-ն առաքված էլեկտրական էներգիայի դիմաց «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից Ընկերությանը կատարված վճարումների վերահաշվարկ՝ կիրառելով ոռոգման

համակարգի վրա գործող փոքր հիդրոէլեկտրակայանների (որպիսին հանդիսանում է Ընկերությունը) համար նախատեսված սակագները՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների, և ներկայացնել Ընկերությանը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը և Հանձնաժողովին:

4. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը և Ընկերությանը՝ ըստ «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից սույն որոշման 3-րդ կետի համաձայն կատարված վերահաշվարկի՝ մինչև սույն թվականի նոյեմբերի 20-ը կազմել Ընկերության պարտավորությունների մարման ժամանակացույց՝ մինչև 2021 թվականի փետրվարի 1-ը գործողության ժամկետով՝ պատճենը ներկայացնելով Հանձնաժողով:
5. Ընկերությանը և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշման 3-րդ կետի համաձայն կատարված վերահաշվարկին համապատասխան՝ ապահովել համապատասխան գումարների վերադարձը և դրանց ստացումը՝ սույն որոշման 4-րդ կետում նշված ժամանակացույցով սահմանված ժամկետներում և չափերով:
6. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
7. Սահմանել, որ սույն որոշման 2-5-րդ կետերը ենթակա են անհապաղ կատարման:
8. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի նոյեմբերի 1-ից, իսկ 2-րդ կետի 1-ին ենթակետի գործողությունը տարածվում է 2017 թվականի մայիսի 17-ից, 2-րդ ենթակետի գործողությունը 2019 թվականի հուլիսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան

25 հոկտեմբերի 2019թ.